

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Հովիւ» շաբաթաթերթի № 22-ի մէջ կարդում ենք շնորհալի Կ. Բենիկ վարդապետի մի շատ հետաքրքրական և փաստալից յօդուած «Մշակ» թերթի բարբերի մասին:

Սօսելով նորա վերաբերմունքի մասին դէպի հայ թերուս և ապա կրթուած հոգևորականները, հեղինակն ասում է՝

«Տասնեակ տարիներ մի խումբ լեզուագարներ «Մշակ» թերթի մէջ անդուռն բերանով հայհոյել են հատ-հատ ու խումբ-խումբ եկեղեցականներին: Միամիտ հայ ազգը ճշմարտութեան ջատագով էր կարծում դրանց, վասն զի վարպետորդիք կեղծում էին իրանց հոգին, քօշարկում իրանց սև սիրտն ու հռչակում թէ հայ եկեղեցականների տգիտութիւնն է փրփուր բերում իրանց բերանին: Ժամանակը մերկացուց այդ կեղծիքը. եկեղեցականների տգիտութիւնից ցաւած երիտասարդների մի խումբ ժամանակակից բարձր ուսումնի ստանալուց զկնի, իրանց ազգի և եկեղեցու սիրովը տոգորուած, իրանց անձնական երջանկութիւնը թաղեցին, վրան հոգոց կարդացին ու վերարկու հագնելով կրօնաւոր ու քահանայ դարձան ու իրանց ազգի և եկեղեցու վերածնութեան գործի սպասաւորութեանը նուիրուեցան:

Թւում էր թէ հայհոյիչների լեզուն ընդունակ պիտի լինէր գոհութիւն յայտնելու այդ ինքնուրացութեան համար: Բայց դիմակներ պատուող ժամանակը (համբոյր իւր արգար ձեռաց) մերկացուց այդ կեղծիքը. հայհոյիչներն սկսան դիւական չարախնդութեամբ հալածել ուսեալ եկեղեցականներին և այն աստիճանի սիրեցին տգիտութիւնը, որ 1892 թուականին անյատակ տգիտութեամբ պերճացած Երեմիա եպիսկոպոսին հայրապետութեան թեկնածու դրին»:

Եւ ապա հեղինակը ասում է՝

«Այժմ, խղճի կարծեցեալ ազատութեան այս օրերում, «Մշակի» գաճաճները սպանել են խիղճն իրանց կրծքում, և սև

ապերախտութեամբ սպառազինուած՝ սրել են իրանց լեզուն հայ եկեղեցու դէմ, ամբողջ հայ շոգեւորականութեան դէմ...

Ներանք պատերազմ հրատարակեցին հայոց եկեղեցու դէմ, նրանք ճառում են թէ հայոց հոգեւորականութիւնը դարերի ընթացքում Հայ ազգի յառաջադիմութեանն արգելք է եղել: Ո՞վ ուրացութիւն Հարցուցէք, ով տուաւ ձեզ քիր ու գրականութիւն, ով գրեց ձեր ազգի պատմութիւնը, որի ծանօթութեամբ էք պարծենում, ով դաստիարակեց ձեր սիրած հերոս Վարդանին, որու պերճախօս ձայնը որոտաց Աւարայրի դաշտում հայրենեաց փրկութեան համար, ոյք էին որ նահատակուեցան խոսապատի անպատում իրանց ազգի համար. ով էր որ հայրենեաց փառքի տոչորոզ կարօտով երգեց «Զարթիք փառք իմ...» Յիշում էք, ուրացութեամբ կուրացածներ, Ս. Ս. Սահակ, Մեսրոբ, Խորենացի, Եղիշէ, Աստուծոյ երէց, Շնորհալի և այլն իրանց աստղաբոյլ խմբով: Բայց թողնենք հնութիւնը, չվրդովենք հին դարերի անուշ նիրհը: Հարցուցէք, ժամանակակից հերոսներ, որ գործիչ էք հռչակում ձեզ և դափնեայ պսակ պահանջում հայ արնյութիկ ազգից, ում էք պարտական ձեր ուսումով, ձեզ լեզուով, ձեր գաղափարներով. չէ՞ դուք Ներսէս Ե-ի դպրանոցի, Մատթէոսի և Դէորդ Դ-ի դպրոցների սաներն էք, չէ՞ որ ձեր հոգին թեւաւորուել է այն ազգի մէջ, որին եկեղեցական դպրոցների շունչն է հպել ու պահել: Եւ դուք դեռ սիրտ ունիք այդ սուրբ հարց գերեզմանը վրդովելու, եկեղեցին մի ցնցոտի իր համարելու, որ պէտք է դէն ձգել. եկեղեցականութիւնը մի շարաւալից խոց, որ պէտք է նշտարել ու հոսեցնել: Մայր եկեղեցին ձեզ լեզու տուաւ, հայրենասիրութեան ազնիւ զգացմունքից զօտի հիւսեց ձեզ համար, գիտակցութեան սուր տուաւ ձեր ձեռքը թշնամու դէմ, իսկ դուք այդ սուրբ վատաբար ձեր ձօր կուրծքն էք մխում:

Վայ ձեզ, ապերախտ գլուխներ, վայ «որ արբեալքդ էք և ոչ ի գինւոյ»:

Երբ հնադարեան ազգային եկեղեցու սփականութիւնն յափշտակուեցաւ, երբ ազգի ինքնապաշտպանութեան սրբազան վայրկեանը վրայ հասաւ, միթէ եկեղեցականութիւնը յետ ընկաւ աշխարհականութիւնից, միթէ միայն աշխարհականներ (?) տառապեցան տարագրութեան մէջ ու բանտերում, միթէ հայ եկեղեցականների շրթունքը չէր որ հուր էր բորբոքում քաջարի հայոց սրտերում, միթէ կռուող քաջերի մէջ չկային եկեղեցականներ: Իսկ դուք ուր էիք, կեանքով ու գոյքով ապահովեալ հայոյիչ ապերախտներ...»

Այս գործող փաստերը յիշեցնելով «ուրացութեամբ կուրացածներին» յօդուածագիրը դիմում է «անարգուած ու ապերախտութեամբ խարազանուած հայ հոգևորականութեան» առաջարկելով՝ պահանջել ազգիս Հայրապետից կրօնական ժողով՝ գումարել Ս. Էջմիածնում, որը որոշէ թէ որքան անպէտք է հայ եկեղեցին ու վնասակար նորա հոգևորականութիւնը:

Մենք ևս մեր ձայնը միացնում ենք յօդուած այդ կրօնական ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ժողովի և Հ. Բենիկ վարդապետի հետ միասին դիմում հայ հոգևորականութեան, որ նա որոշէ իւր դերը ազգի ներկայ փոթորկալից ժամանակ:

Այս փոքրիկ տեսութիւնը մամուլի տակ էր, երբ մենք կարդացինք «Մշակի» № 135-ի մէջ մի պատասխան իրեն յատուկ փողոցային լեզուով գրուած:

«Հռչակաւոր» հեղինակը փրփուրը բերանին բողբոջում է, թէ ինչ իրաւունքով մի ամբողջ դասակարգ, որ եղել է և այժմ էլ շարունակում է լինել ազգային ինքնաճանաչութեան և գոյութեան եռանդուն պաշտպանը, թոյլ է տալիս իրան խօսել իւր մասին այս կամ այն խնդրի վերաբերմամբ:

Այս վերաբերմունքը մեզ աւելի ու աւելի է համոզում, թէ այս, անհրաժեշտ է որոշել հոգևորականութեան դերը:

Հոգևոր հայրեր, Ձեզ աւելորդ են համարում, Ձեզ չեն ուզում. էլ ինչու էք գտնուած մնում և թոյլ տալիս, որ Ձեր դիմակի տակ թագնուած ինքնակոչ անձինք ճնշմամբ իշխեն թէ Ձեզ վերայ և թէ ամբողջ ազգի: Հեռացէ՛ք վանքերից և պաշտօններից և հրաւիրեցէ՛ք Ձեր փեշի տակ թագնուածներին բացարձակ իրենց ձեռքն առնել ամբողջ կառավարութիւնն ու ապագայի պատասխանութիւնը պատմութեան առաջ: Շտապեցէ՛ք մինչև ուշ չէ, մինչև պատմութիւնը Ձեզ չէ ճանաչել ճգնաժամի լուծման ղեկավարը:

Բայց անցնենք միւս կէտին:

«Մշակն» ասում է, թէ նա չի պաշտպանել Երեմիայի տգիտութիւնը, այլ՝ ընդունակութիւնը:—Մենք զարմացած ենք «Մշակի» տրամաբանութեան վերայ: Մի մարդ, որ անյատակ տգէտ է, որ մի ամիս շարունակ սովորում էր թէ ինչպէս պէտք է արք ստորագրէր, նա ինչ վարչական ձիրք կամ վարչական ընդունակութիւն կարող է ունենալ: Բայց չմոռանանք ասել, որ տգիտութեան դէմ արշաւող «Մշակը» չի ուրանում, որ պաշտպանել է մի մարդ՝ որ անյատակ տգէտ է եղել:

Ուրեմն սորանից մի բան միայն կարելի է եզրակացնել. որ Մշակը ծառայել է անձնականին և ոչ հասարակութեան:

Ինչ վերաբերում է մեր միակ հոետոր և շնորհալի Բենիկ վարդապետի դէմ ուղղուած փողոցային հայհոյանքներին և զրուպարութեան՝ այդ թողնում ենք պատասխանել իրան Հ. Բենիկին, ստութեան և կեղծիքի (թերևս մշակականութեան) այդ խարազանաւոր հալածողին:

ՎԱՐԴԳԵՍ

«Կայծ» № 30-ի մէջ կարդում ենք հետևեալ՝

Հաստատադրելից մենք իմացանք, որ «Ալիք» *) թերթի այն հաղորդած լուրը, թէ կաթողիկոսը պատուել է հոգևորականների կողմից ներկայացրած «գիմում»-ը վերջին փոփոխումների առիթով—միանգամայն ճիշտ չէ: Կաթողիկոսը ընդունել է այդ «գիմումը»:

Այս օրերս մի վարդապետ ուզեցել է էջմիածնից գալ Թիֆլիս, բայց կայարանում նրան յըջապատում են Դաշնակցական ղեկւորները և կոպիտ ոյժ գործադրելով ստիպում են վերադառնալ իր խուց: Ի բի «Դաշնակցութիւնը» խուզարկութիւն է աւելի և գտել է, որ այդ վարդապետը «բազմապիսեմի» չէ. Թիֆլիս ճանապարհուհու համար:

Շատ հետաքրքիր լուրեր են գալիս էջմիածնից. Դաշնակցութիւնը այնտեղ նուաճել է առաւելագույն և ինչ ուղում է անել աւելի է, և ուրիշներին էլ ստիպում է անել:

Էջմիածնի միաբանութեան փողոցները էլ ոչ մի գաղտնիք չունեն, ոչ բնակարանի և ոչ էլ անձի ազատութիւնը անձեռնմխելի չեն Դաշնակցական ժանդարմաբիայի և պօլիցիայի կողմից: Մի խօսքով Վաղարշապատում և էջմիածնում հրատարակուած է զինւորական, մինչև անգամ աշարման զրութիւնը... հայ պեղափութական-ի ձեռքով: Սեպուղիները մեծ իրաւանցման մէջ են և խելքները կորցրել են: Ուսման կերպով խօսուում է, որ վերջին «բէֆօմները» յօլինւած են Դաշնակցութեան կողմից և կաթողիկոսը միայն ստիպուած է եղել ստորագրել:

Սեպ զարմացնում է, թէ ինչ գործ ունի «սօցիալիստ» Դաշնակցութիւնը էջմիածնում, հոգևորականների հետ: Կարելի է նա ուղում է կուսակցական պրօֆէսիօնալ միութիւն կազմակերպել նրանից:

Հետաքրքիր է իմանալ, թէ ինչ կապ ունեն հայ բանւոր դասակարգի շահերը այդ բոլոր զարմանալի փաստերի հետ:

*) Այդ լուրը հաղորդեց ոչ Սիփը, այլ Մշակը: